



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ  
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

**ՀՐԱՄԱՆ**

№ 98-16/0

09.10.2020

«ԼԱՎԱԳՈՒՅՆ ՄԱՐԶԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔ» ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ,  
ԱՆՅԿԱՅՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԸ  
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» Հայաստանի  
Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի «գ» և «ժ.1» կետերի՝

**ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ**

1. Հաստատել՝

- 1) «Լավագույն մարզական ընտանիք» մրցույթի (այսուհետ՝ Մրցույթ) կանոնակարգը՝ համաձայն № 1 հավելվածի,
- 2) Մրցույթի անցկացման ծրագիրը չորս տարիքային խմբերի համար՝ համաձայն № 2 հավելվածի,
- 3) Մրցույթի անցկացման ծրագիրը անվասայլակով հաշմանդամություն ունեցող ընտանիքների համար՝ համաձայն № 3 հավելվածի,
- 4) Մրցույթի 1-ին և 2-րդ փուլերի հաշվետվությունների ձևերը՝ համաձայն № 4 հավելվածի:

X

արձանագրության

ՆԱԽԱՐԱՐ

Signed by



Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ  
«ԼԱՎԱԳՈՒՅՆ ՄԱՐԶԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔ» ՄՐՑՈՒՅԹԻ

I. ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. 2020 թվականին անցկացվող «Լավագույն մարզական ընտանիք» մրցույթի (*այսուհետք՝ Մրցույթ*) նպատակն է՝ անհատի բազմակողմանի ու ներդաշնակ զարգացումը, բնակչության առողջության ամրապնդումը, առողջ ապրելակերպի ձևավորման գործում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի դերի բարձրացումը, բնակչության ակտիվ հանգստի կազմակերպումը:

2. Մրցույթի խնդիրներն են՝ տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ֆիզկուլտուրայի և սպորտի ուղղությամբ կատարվող աշխատանքների խթանումը, բնակչության շրջանում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի քարոզումը, բնակչության ֆիզիկական դաստիարակությանը, ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելու համար նպաստավոր պայմանների ստեղծումը, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի միջոցով ընտանեկան կապերի ամրապնդում և առողջ կենսակերպի գաղափարների արմատավորումը, հաշմանդամային սպորտի զարգացման խթանումը, սոցիալական հավասարության խթանումը, հաշմանդամություն ունեցող անձանց շրջանում բարոյահոգեբանական մթնոլորտի բարելավումը:

II. ԺԱՄԿԵՏԸ ԵՎ ՎԱՅՐԸ

3. Մրցույթն անցկացվելու է տվյալ օրացուցային տարվա հունիս-հուլիս ամիսներին՝ 2 փուլով. 1-ին փուլը՝ մարզային, 2-րդ փուլը՝ եզրափակիչ:

1) 1-ին փուլն անցկացվելու է հունիսի 5-ից մինչև հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածում՝ Հայաստանի Հանրապետության մարզերում, Երևան քաղաքում և Արցախի Հանրապետությունում:

2) 2-րդ՝ եզրափակիչ փուլի մրցումներն անցկացվելու են 3 օրում՝ Ծաղկաձոր քաղաքում: Եզրափակիչ փուլի անցկացման ստույգ ժամկետի մասին Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (*այսուհետք՝ Նախարարություն*) կողմից կտեղեկացվի լրացուցիչ:

III. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

4. Մրցույթի նախապատրաստման և անցկացման աշխատանքները համակարգում է Նախարարությունը:

5. 1-ին՝ մարզային փուլի կազմակերպման և անցկացման անմիջական պատասխանատվությունը կրում են Հայաստանի Հանրապետության մարզպետարանների, Երևանի քաղաքապետարանի, Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարության համապատասխան վարչությունները և բաժինները:

6. Եզրափակիչ փուլի մրցումների անցկացման անմիջական պատասխանատվությունը կրում է Նախարարության կողմից հաստատված մրցավարական հանձնաժողովը:

7. Մրցույթի առաջին, երկրորդ փուլերի ընթացքում վնասվածքներ ստացած մասնակիցների բուժումը կատարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

#### IV. ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

8. Մրցույթն անցկացվում է չորս տարիքային խմբերով՝

1) 1-ին տարիքային խումբ՝ 6-ից 8 տարեկան երեխա ունեցող ընտանիքներ (2012-2014 թթ).

2) 2-րդ տարիքային խումբ՝ 9-ից 11 տարեկան երեխա ունեցող ընտանիքներ (2009-2011 թթ).

3) 3-րդ տարիքային խումբ՝ 12-ից 14 տարեկան երեխա ունեցող ընտանիքներ (2006-2008 թթ).

4) 4-րդ տարիքային խումբ՝ 15-ից 16 տարեկան երեխա ունեցող ընտանիքներ (2005-2004 թթ):

9. Հաշմանդամություն ունեցող անձանց (*հայրը կամ մայրը սայլակով*) ընտանիքները եզրափակիչ փուլի մրցույթին մասնակցում են 2 տարիքային խմբով: Հաշմանդամություն ունեցող անձանց ընտանիքներում երեխայի տարիքային խումբն է՝ 6-9 (2014-2011 թթ.) և 10-13 (2010-2007 թթ.) տարեկան:

10. Մասնակցության պայմաններն են՝

1) Մրցույթի 1-ին մարզային փուլին կարող են մասնակցել բոլոր ընտանիքները, որոնք ունեն բժշկի թույլտվություն: Ընտանիքի կազմը՝ 3 անձ (*հայրը, մայրը և երեխան՝ անկախ սեռից*),

2) ընտանիքը մրցույթին մասնակցում է միասնական համազգեստով,

3) յուրաքանչյուր ընտանիք իրավունք ունի մասնակցելու միայն մեկ տարիքային խմբի մրցույթին:

11. Մրցույթի 2-րդ՝ եզրափակիչ փուլին մասնակցում են Հայաստանի Հանրապետության մարզերում, Երևան քաղաքում և Արցախի Հանրապետությունում 1-ին փուլում ըստ տարիքային խմբերի մրցանակային 1-ին տեղը գրաված ընտանիքները: Հաշմանդամություն ունեցող անձանց մրցույթում Հայաստանի Հանրապետության մարզերից մասնակցում են մեկական ընտանիք և Արցախի Հանրապետությունից 2-ական, իսկ Երևան քաղաքից՝ 12 ընտանիքներ (*հայրը կամ մայրը սայլակով*):

#### V. ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՐԶԱԶԵՎԵՐԸ (ԶՈՐՍ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԽՄԲԵՐԻ ՀԱՄԱՐ)

12. Մրցույթի մրցաձևերն են՝

- 1) խաղային փոխանցավազք 30 մ,
- 2) վարժություն բասկետբոլի գնդակով,
- 3) թենիսի գնդակի նետում,
- 4) խաղային փոխանցավազք՝ թենիսի գնդակով,
- 5) հեռացատկ (տեղից),
- 6) խաղային փոխանցավազք 80 մ (30 մ + 30 մ + 20 մ):

13. Մրցույթի ընթացքում յուրաքանչյուր խախտման համար ընտանիքին տրվում է տուգանային միավոր (ըստ մրցաձևերի):

14. Յուրաքանչյուր մարզաձևում մեկից ավելի ընտանիքների արդյունքների հավասարության դեպքում առավելությունը համապատասխանաբար տրվում է՝

- 1) ընտանիքի կազմում ավելի մեծ տարիքի (*գումարային*) ծնողներ ունեցողին,
- 2) ընտանիքի կազմում աղջիկ երեխա ունեցողին,
- 3) ընտանիքի կազմում ավելի փոքր տարիքի երեխա ունեցողին:

15. Մրցույթի յուրաքանչյուր մարզաձևում որոշվում են 1-12-րդ տեղերը՝ հետևյալ կերպ. 1-ին տեղ՝ 12 միավոր, 2-րդ տեղ՝ 11 միավոր, և այդպես մինչև 12-րդ տեղը:

16. Ընդհանուր միավորներով հաղթող ընտանիքը որոշվում է առանձին մարզաձևում ձեռք բերած միավորների առավելագույն գումարով: Մեկից ավելի ընտանիքների միավորների հավասարության դեպքում առավելությունը համապատասխանաբար տրվում է՝

- 1) առանձին մարզաձևերում առավել բարձր մրցանակային տեղեր գրաված ընտանիքին,
- 2) ընտանիքի կազմում ավելի մեծ տարիքի (*գումարային*) ծնողներ ունեցողին,
- 3) ընտանիքի կազմում աղջիկ երեխա ունեցողին,
- 4) ընտանիքի կազմում ավելի փոքր տարիքի երեխա ունեցողին:

17. Հաղթող է ճանաչվում այն ընտանիքը, որը բոլորից արագ է ավարտում վարժությունը (*վայրկյան*):

VI. ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՐԶԱՁԵՎԵՐԸ ՍԱՅԼԱԿՈՎ ՏԵՂԱՇԱՐԺՎՈՂ  
ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁ ՈՒՆԵՑՈՂ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ  
(ՄԵԿ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԽՄԲԻ ՀԱՄԱՐ)

18. Մրցույթի մրցաձևերն են՝

- 1) խաղային փոխանցավազք 30 մ,
- 2) վարժություն բասկետբոլի գնդակով,
- 3) խաղային փոխանցավազք՝ թենիսի գնդակով,
- 4) խաղային փոխանցավազք 80 մ (30 մ + 30 մ + 20 մ),
- 5) օղակներով նետումներ նշանակետին,
- 6) հավաքիր «ՀԱՂԹԱՆԱԿ» բառը:

19. Յուրաքանչյուր մարզաձևում մեկից ավելի ընտանիքների արդյունքների հավասարության դեպքում առավելությունը համապատասխանաբար տրվում է՝

- 1) ընտանիքի կազմում ավելի մեծ տարիքի (*գումարային*) ծնողներ ունեցողին.
- 2) ընտանիքի կազմում աղջիկ երեխա ունեցողին.
- 3) ընտանիքի կազմում ավելի փոքր տարիքի երեխա ունեցողին:

20. Մրցույթի յուրաքանչյուր մարզաձևում որոշվում են 1-ինից 12-րդ տեղերը հետևյալ կերպ. 1-ին տեղ՝ 12 միավոր, 2-րդ տեղ՝ 11 միավոր, և այդպես մինչև վերջին տեղը:

21. Ընդհանուր միավորներով հաղթող ընտանիքը որոշվում է առանձին մարզաձևում ձեռք բերած միավորների առավելագույն գումարով: Մեկից ավելի ընտանիքների միավորների հավասարության դեպքում առավելությունը համապատասխանաբար տրվում է՝

1) առանձին մարզաձևերում առավել բարձր մրցանակային տեղեր գրաված ընտանիքին,

2) ընտանիքի կազմում ավելի մեծ տարիքի (*գումարային*) ծնողներ ունեցողին,

3) ընտանիքի կազմում աղջիկ երեխա ունեցողին,

4) ընտանիքի կազմում ավելի փոքր տարիքի երեխա ունեցողին:

## VII. ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄԸ

22. Մրցույթի 1-ին մարզային փուլում ընդհանուր թիմային հաշվարկում յուրաքանչյուր տարիքային խմբում մրցանակային տեղեր գրաված ընտանիքները պարգևատրվում են Նախարարության համապատասխան կարգի հավաստագրերով և դրամական մրցանակներով.

1) 1-ին տեղ՝ 150.0 հազար (*մեկ հարյուր հիսուն հազար*) դրամ,

2) 2-րդ տեղ՝ 130.0 հազար (*մեկ հարյուր երեսուն հազար*) դրամ,

3) 3-րդ տեղ՝ 100.0 հազար (*մեկ հարյուր հազար*) դրամ:

23. Մրցույթի 2-րդ՝ եզրափակիչ փուլում չորս տարիքային խմբերում և հաշմանդամություն ունեցող անձ ունեցող երկու տարիքային խմբերում ընդհանուր թիմային հաշվարկում մրցանակային 1-ին, 2-րդ, 3-րդ տեղերը գրաված ընտանիքները պարգևատրվում են՝ համապատասխանաբար 500.0 հազար (*հինգ հարյուր հազար*), 400.0 հազար (*չորս հարյուր հազար*) և 300.0 հազար (*երեք հարյուր հազար*) դրամ դրամական մրցանակներով, մեդալներով, հուշանվերներով, և նրանց տրվում են վկայագրեր:

24. Մրցույթի 2-րդ՝ եզրափակիչ փուլում յուրաքանչյուր տարիքային խմբում առանձին մարզաձևերից առաջին տեղերը գրաված ընտանիքները, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձ ունեցող ընտանիքները Նախարարության կողմից պարգևատրվում են 100.0 հազար (հարյուր հազար), 2-րդ տեղերը 50.0 հազար (հիսուն հազար) և 3-րդ տեղերը՝ 30.0 հազար (երեսուն հազար) դրամ մրցանակներով:

25. Պարգևատրվում են նաև ընտանիքների ամենակրտսեր մասնակիցը և հաշմանդամություն ունեցող անձ ունեցող ընտանիքների ամենակրտսեր մասնակիցը՝ 100.0 հազարական (հարյուր հազար) դրամով:

26. Մրցույթում ընդհանուր հաշվարկով առաջին, երկրորդ, երրորդ տեղերը գրաված պատվիրակությունները պարգևատրվում են համապատասխան գավաթներով:

## VIII. ԾԱԽՍԵՐԸ

27. Մրցույթի 1-ին՝ մարզային փուլում մրցանակային տեղեր գրաված ընտանիքներին հավաստագրեր, դրամական մրցանակներ, մրցավարների օրապահիկ, մարզագույք հատկացնում է Նախարարությունը:

28. Մրցույթի 2-րդ՝ եզրափակիչ փուլի կազմակերպման և անցկացման հետ կապված ծախսերը (մրցումների անցկացման համար մարզագույք, անհրաժեշտ պարագաներ և մրցավարների մարզահագուստ, մասնակից բոլոր երեխաների համար նվերներ, գովազդային նյութերի պատրաստում, մրցավարների գործուղում, գիշերավարձ, սնունդ, ճանապարհաճախս, մրցավարներին դրամական պարգև, մրցանակային տեղեր գրաված թիմերին դրամական մրցանակներ, վկայագրեր, մեդալներ, հուշանվերներ՝ մրցանակային տեղեր գրաված ընտանիքներին և պատվավոր հյուրերին, գրենական պիտույքների ձեռքբերում, ռադիոհանգույցի ապահովում, տրանսպորտային միջոցների ապահովում, վրանների մետաղական կոնստրուկցիայի մոնտաժում և ապամոնտաժում, մարզադաշտի վարձակալում, շուրջօրյա շտապ օգնության բժշկական ծառայություն և գավաթներ թիմային հաշվարկով, մրցանակային տեղեր գրաված մարզերին) կատարվում են Հայաստանի Հանրապետության տվյալ օրացուցային տարվա պետական բյուջեի միջոցների հաշվին՝ «Լավագույն մարզական ընտանիք» մրցույթի անցկացում» ծրագրով:

29. Մրցույթի 2-րդ՝ եզրափակիչ փուլի մասնակից ընտանիքների և յուրաքանչյուր մարզի մեկ ներկայացուցչի գործուղման հետ կապված ծախսերը (գիշերավարձ, սնունդ և ճանապարհաճախս) կատարվում են Հայաստանի Հանրապետության տվյալ օրացուցային տարվա պետական բյուջեի միջոցների հաշվին՝ «Լավագույն մարզական ընտանիք» մրցույթի անցկացում» ծրագրով, իսկ մասնակից ընտանիքների մարզահագուստի ծախսերը հոգում են գործուղող կազմակերպությունները՝ Հայաստանի Հանրապետության մարզպետարանները, Երևանի քաղաքապետարանը և Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարությունը:

## IX. ՀԱՅՏԵՐԸ

30. 1-ին փուլի մասնակից ընտանիքները հայտերը ներկայացնում են Հայաստանի Հանրապետության մարզպետարանների, Երևանի քաղաքապետարանի և Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարության համապատասխան վարչություններ և բաժիններ՝ մինչև տվյալ օրացուցային տարվա մայիսի 30-ը:

31. Մրցույթի 2-րդ՝ եզրափակիչ փուլի մասնակցության անվանական հայտերը (հաստատված մարզպետի, Երևանի քաղաքապետի, Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարության կողմից) և 1-ին փուլի հաշվետվությունները (ըստ Ձև 1-ի, Ձև 2-ի և Ձև 3-ի) ներկայացվում են Նախարարություն մինչև 2020 թվականի հուլիսի 8-ը: Նշված ժամկետից ուշ ներկայացված հայտերը չեն ընդունվում:

32. Մրցույթի 2-րդ՝ եզրափակիչ փուլին հարգելի պատճառներով մասնակցել չկարողացող ընտանիքի փոխարեն պետք է մասնակցի հաջորդ տեղը գրաված ընտանիքը:

33. Մրցույթի 2-րդ՝ եզրափակիչ փուլի ընդունելության օրը ընտանիքը հայտի հետ միասին բնօրինակներով մանդատային հանձնաժողովին է ներկայացնում՝

- 1) անձնագիրը (հոր, մոր),
- 2) ամուսնության վկայականը,
- 3) տեղեկանք բնակության վայրից՝ լուսանկարով,
- 4) երեխայի ծննդյան վկայականը:


ԾՐԱԳԻՐ

«ԼԱՎԱԳՈՒՅՆ ՄԱՐԶԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔ» ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ  
(ՉՈՐՍ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԽՄԲԵՐԻ ՀԱՄԱՐ)

**1. Խաղային փոխանցվազք՝ 30 մ**

Առաջին մասնակիցը՝ ընտանիքի երեխան, մրցավարի հրահանգով վազքով մոտենում է ներքնակին, կատարում է գլուխկոնծի վարժությունը (մեկնարկից մինչև ներքնակ՝ 5 մ), վերցնում է ներքնակի առջև դրված մականը, այնուհետև ներքնակի մոտից թենիսի գնդակը վարելով՝ ոլորապտույտ անցնում է 5 կանգնակների միջով (ներքնակից մինչև 1-ին կանգնակը՝ 3 մետր, կանգնակների հեռավորությունը՝ 2 մետր, վերջին կանգնակից մինչև հարվածային գոտի՝ 5 մ), մոտենում է հարվածային գոտի (հարվածային գոտու երկարությունը՝ 2 մ, հարվածային գոտուց մինչև դարպաս՝ 5 մ) և այնտեղից 5 մետր հեռավորությունից գնդակը հարվածելով՝ ուղարկում է դեպի դարպասը (դարպասի լայնությունը՝ 60-80 սմ, բարձրությունը՝ 40-50 սմ): Մասնակից երեխան՝ մականը ձեռքին, վազքով շրջանցում է դարպասը և վերադառնում, մականը թողնում է ներքնակի մոտ, վերադառնում մեկնարկային գիծ, ձեռքի հպումով էստաֆետը փոխանցում հաջորդ մասնակցին՝ ընտանիքի մորը: Նույն վարժությունը կատարում է մայրը կամ հայրը (մայրը գլուխկոնծի վարժությունը չի կատարում): Վերջին կատարողը՝ մայրը կամ հայրը, վարժությունը եզրափակում է՝ մականը ձեռքին հատելով մեկնարկային գիծը:

Հաղթող է ճանաչվում բոլորից արագ և արդյունավետ կատարող ընտանիքը (վայրկյան):



## **Ծանոթություն**

1-ին և 2-րդ տարիքային խմբերում ընտանիքի երեխան ներքնակի մոտից ձեռքով վերցնում է թենիսի գնդակը, հաղթահարում կանգնակները առանց մականների և ձեռքով գնդակը հարվածային գոտուց նետում է դեպի դարպասը:

- Յուրաքանչյուր անարդյունավետ հարվածի համար ընտանիքը ստանում է 1 տուգանային վայրկյան:

- Հարվածային գոտուց չկատարած հարվածի համար մասնակիցը ստանում է 1 տուգանային վայրկյան (*առաջ կամ հետո, գնդակը և մասնակիցը պարտադիր պետք է լինեն հարվածային գոտում*):

- Յուրաքանչյուր արդյունավետ հարվածի համար ընտանիքի ձեռք բերած ընդհանուր ժամանակից հանվում է 1 վայրկյան:


- Կանգնակները հաղթահարելիս գնդակը հեռու գլորվելու կամ թռչելու դեպքում մասնակիցը ինքնուրույն, մականով կամ ձեռքով գնդակը վերադարձնում է վրիպում կատարած տեղը և այնտեղից շարունակում է վարժությունը: Հակառակ դեպքում կտրվի 5 տուգանային վայրկյան:

## **2. Վարժություն բասկետբոլի գնդակով**

Մրցավարի հրահանգի համաձայն երեխան, մարզադահլիճի աջ կամ ձախ կողմի մեկնարկային գծից (*մեկնարկային գծից բասկետբոլի օղակ՝ 9 մետր*) գնդակը վարելով, ոլորապտույտ վազքով արագ անցնում է 3 կանգնակների միջով (*մեկնարկից մինչև նշագիծ՝ 1,5 մետր, նշագծից 1-ին կանգնակը՝ 1,5 մետր, կանգնակների հեռավորությունը՝ 1,5 մետր, վերջին կանգնակից մինչև բասկետբոլի օղակ՝ 3 մետր*), վերջին կանգնակը անցնելով՝ կատարում է նետում բասկետբոլի օղակին, վերցնում է գնդակը, առնվազն երկու վարում կատարելով՝ հասնում է և անցնում նշագիծը, գնդակը հանձնում է մեկնարկային գծին կանգնած ընտանիքի մորը: Նույնը կատարում է մայրը և նշագիծը անցնելով՝ գնդակը հանձնում է ընտանիքի հորը: Գնդակը վարելով՝ հայրն անցնում է կանգնակների միջով, կատարում նետում, վերցնում գնդակը, առնվազն երկու վարում կատարելով՝ մոտենում է տուգանային նետման գիծ և կատարում տուգանային նետում ազատ ոճով՝ չանցնելով գիծը:

Տուգանային նետումից և գնդակը հատակին դիպչելուց հետո մրցավարը կանգնեցնում է վայրկյանաչափը:

Հաղթող է ճանաչվում այն ընտանիքը, որը բոլորից արագ է ավարտում վարժությունը (*վայրկյան*):





### **Ծանոթություն**

- 1-ին տարիքային խմբի երեխան բասկետբոլի գնդակով նետում չի կատարում:
- 1-ին տարիքային խմբի երեխան բասկետբոլի գնդակը ձեռքին ոլորապտույտ անցնում է կանգնակների միջով և վերադառնում մեկնարկային գիծ, էստաֆետը հանձնում ընտանիքի մորը:
- Յուրաքանչյուր մեկ կանգնակ գցելու դեպքում արդյունքին ավելանում է 1 տուգանային վայրկյան:
- Յուրաքանչյուր մեկ վարում չկատարելու դեպքում արդյունքին ավելանում է 1 տուգանային վայրկյան:
- Ընտանիքի յուրաքանչյուր անդամի անարդյունավետ նետման դեպքում ընդհանուր արդյունքին գումարվում է 4 տուգանային վայրկյան:

### **3. Թենիսի գնդակի նետում**

Գնդակի նետում վարժությունը կատարվում է մարզադաշտում՝ հատուկ նշագծված հատվածի սահմաններում: Թիմի յուրաքանչյուր անդամ ունի նետման երեք փորձի իրավունք: Հաղթող թիմը որոշվում է թիմի երեք անդամների նետման լավագույն արդյունքների ընդհանուր գումարով:

### **Ծանոթություն**

Մասնակիցը գնդակը նետելուց հետո չի կարող հատել նշագիծը:

### **4. Խաղային փոխանցավազք՝ թենիսի գնդակներով**

Առաջին համարի մասնակիցը՝ հայրը, մեկնարկային գծից վազքով մոտենում է գետնին մեկ ուղղությամբ դրված 4 օղակներին (*օղակի չափը՝ 25-30 սմ*): 1-ին օղակի մեջ դրված են թենիսի 5 գնդակներ (*մեկնարկից 1-ին օղակ՝ 10 մետր, օղակների հեռավորությունը մեկը մյուսից՝ 2 մետր*): Հայրը վազքով մոտենում է 1-ին օղակին, վերցնում է օղակի մեջ դրված 1-ին գնդակը, տեղադրում 2-րդ օղակի մեջ, վերադառնում է 1-ին օղակի մոտ, վերցնում է 2-րդ գնդակը, դարձյալ տեղադրում 2-րդ օղակի մեջ, և այդպես մինչև վերջին գնդակի տեղադրումը: Ձեռքով մեկից ավելի գնդակ վերցնել չի թույլատրվում: Ավարտից հետո հայրը շարունակում է վազքը, մոտենում է վերջին օղակից 13 մետր հեռավորությամբ դրված զամբյուղին, մոտենում է զամբյուղին, վերցնում է դարթսի 1 նետը, մոտենում է նշագծին, ազատ ոճով կատարում է նետում և վազքով վերադառնում մեկնարկային գիծ, էստաֆետը հանձնում հաջորդ մասնակցին՝ մորը: Մայրը, վերցնելով 2-րդ օղակի թենիսի 5 գնդակները, հերթականությամբ (*ինչպես հայրը*) տեղադրում է դրանք 3-րդ օղակի մեջ, վազքով մոտենում է զամբյուղին, կատարում մեկ նետում և վերադառնում մեկնարկային գիծ՝ էստաֆետը հանձնելով երեխային: Երեխան վազքով մոտենում է 3-րդ օղակին, թենիսի 5 գնդակները հերթականությամբ տեղադրում է 4-րդ օղակի մեջ, մոտենում է զամբյուղին, վերցնում է դարթսի նետը և կատարում նետում նշագծին (*հեռավորությունը դարթսի թիրախից նշագիծ՝ 2.37 մետր, դարթսի տրամագիծը՝ 45 սմ, բարձրությունը գետնից՝ 1 մետր 37 սմ*) և վերադառնում մեկնարկային գիծ: Միավորները հաշվարկվում են ընտանիքի անդամների 3 նետման ընդհանուր արդյունքով՝ համաձայն աղյուսակի: Ըստ ձեռք բերված միավորների, աղյուսակի համաձայն, հանվում են վայրկյաններ ընտանիքի կատարած արդյունքից: Իսկ այն ընտանիքին, որը միավոր ձեռք չի բերում, տրվում են 5 տուգանային վայրկյաններ, որոնք գումարվում են ընտանիքի վաստակած արդյունքներին:

Հաղթող է ճանաչվում այն ընտանիքը, որը բոլորից արագ է կատարել վարժությունը (*վայրկյան*):

## Աղյուսակ


Արդյունքը (միավորը)	Տրված միավորը (վայրկյաններով)	Թիրախ (տրամագիծը՝ 45 սմ)
30 - 27	-6.0	
26 - 23	-5.0	
22 - 19	-4.0	
18 - 15	-3.0	
14 - 10	-2.0	
9 - 5	-1.0	
4 - 1	0	
0	+5.0	

### Ծանոթություն

- Դիպուկ կամ անարդյունավետ նետման համար աղյուսակի համաձայն տրվում են լրացուցիչ միավորներ (միավորները հաշվարկվում են դարձի նետերը թիրախի վրա լինելու դեպքում):
- Ձեռքով մեկից ավելի գնդակ վերցնելու դեպքում տրվում է 1 տուգանային վայրկյան:
- Վարժության ընթացքում թենիսի գնդակը հեռու թռչելու կամ գլորվելու դեպքում մասնակիցը գնդակը վերադարձնում է նույն տեղը և շարունակում վարժության կատարումը: Հակառակ դեպքում կտրվի 5 տուգանային վայրկյան:

## 5. Հեռացարկ (տեղից)

Հեռացատկ կատարվում է կանգ դրությունից երկու ոտքի հրումով: Ընտանիքի յուրաքանչյուր անդամ ունի երկու փորձի իրավունք: Հաղթողը որոշվում է ընտանիքի երեք անդամների ցատկերի լավագույն արդյունքների ընդհանուր գումարով:



## 6. Խաղային փոխանցավազք 80 մ (30 մ + 30 մ + 20 մ)

Առաջին մասնակիցը վազքով մոտենում է ներքնակին, կատարում գլուխկոնձի (մեկնարկից մինչև ներքնակ՝ 5 մետր), այնուհետև անցնում է 5 մետր հեռավորության վրա դրված մեծ պարկի միջով (երկարությունը՝ 3 մետր, տրամագիծը՝ 70 սմ), վազքով մոտենում է թենիսի գնդակին, վերցնում է պարկը (չափսը՝ 25 սմ տրամագծով, երկարությունը՝ 40-50 սմ),


արագորեն պարկի մեջ է լցնում վազքուղու վրա շարված թենիսի 6 գնդակները (գնդակների հեռավորությունը մեկը մյուսից՝ 1 մետր), պարկը ձեռքին վազքով հատում է զամբյուղը և այն տեղադրում այնտեղ (վերջին 6-րդ գնդակից զամբյուղ՝ 5 մետր), էստաֆետը ձեռքի հպումով հանձնում է զամբյուղի մոտ կանգնած երկրորդ մասնակցին՝ ընտանիքի մորը, որը ոլորապտույտ արագ անցնում է 4 կանգնակների միջով (զամբյուղից մարմնամարզական առաջին օղակ՝ 5 մետր), արագ հաղթահարում է գետնին մեկ ուղղությամբ դրված մարմնամարզական 3 օղակները (հեռավորությունը մեկը մյուսից՝ 3 մետր), օղակները հաջորդաբար անցկացնելով գլխի վրայով՝ դնում է գետնին, վազքով մոտենում և ձեռքի հպումով էստաֆետը փոխանցում է երրորդ մասնակցին՝ ընտանիքի հորը:

Ընտանիքի հայրը՝ պարկի մեջ կանգնած, պարկի եզրերը երկու ձեռքով բռնած ելման դրությունից առաջ է շարժվում 15 մետր, պարկը դնում է նշագծին և վազքով մոտենում է 5 մետր հեռավորության վրա դրված հրաձգության սեղանին և կատարում երեք կրակոց՝ 10 մետր հեռավորությամբ դրված թիրախներին: Յուրաքանչյուր անարդյունավետ կրակոցի համար ստանում է 10 տուգանային միավոր (10 վայրկյան): Հայրը վարժությունը ավարտելուց հետո վազքով վերադառնում է իր մեկնարկային գիծ, որտեղ գծին սպասում է ընտանիքի մայրը: Էստաֆետը հանձնում է նրան: Մայրը վազքով մոտենում է առաջին մասնակցին և էստաֆետը փոխանցում երեխային: Երեխան վազքով հատում է մեկնարկային գիծը:

Հաղթող է ճանաչվում այն ընտանիքը, որը բոլորից արագ է ավարտում վարժությունը (վայրկյան):

### Ծանոթություն

- Յուրաքանչյուր մեկ կանգնակ զցելու դեպքում արդյունքին ավելանում է 1 տուգանային վայրկյան:
- Պարտադրի պայման է մասնակիցների հպումը միմյանց: Հակառակ դեպքում ընտանիքը ստանում է 5 տուգանային վայրկյան, որը կգումարվի ընդհանուր արդյունքին:





Ծ Ր Ա Գ Ի Ր

«ԼԱՎԱԳՈՒՅՆ ՄԱՐԶԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔ» ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ  
(ԱՆՎԱՍԱՅԼԱԿՈՎ ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ  
ՈՒՆԵՑՈՂ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ)

1) **Խաղային փոխանցավազք՝ 30 մ**


Առաջին մասնակիցը՝ երեխան, մրցավարի հրահանգով վազքով մոտենում է ներքնակին, կատարում գլուխկոնձի վարժությունը (մեկնարկից ներքնակ՝ 5 մետր), վերցնում է ներքնակի առջև դրված օղակը (օղակի տրամագծի չափը՝ 20-25 սմ), ոլորապտույտ վազքով արագ անցնում է 5 գուրգերի միջով (ներքնակից մինչև 1-ին գուրգը՝ 3 մետր, գուրգերի հեռավորությունը՝ 3 մետր, վերջին գուրգից մինչև կանգնակ՝ 8 մետր), վազքով մոտենում է կանգնակին (30-35 սմ բարձրությամբ), օղակը տեղադրում է կանգնակի վրա և այն շրջանցելով՝ վազքով վերադառնում է մեկնակային գիծ՝ ձեռքի հպումով էստաֆետը փոխանցելով անվասայլակով ծնողին (մորը կամ հորը): Անվասայլակով մայրը (կամ հայրը) մոտենում է ներքնակին՝ կանգնակի վրա դրված օղակին, այն վերցնելով՝ անվասայլակով ոլորապտույտ անցնում է 5 գուրգերի միջով, օղակը տեղադրում է կանգնակի վրա, շրջանցելով կանգնակը՝ արագ վերադառնում է մեկնակային գիծ և էստաֆետը փոխանցում թիմի մյուս անդամին: Նույն վարժությունը կատարում է հաջորդ մասնակիցը (գլուխկոնձի վարժությունը ծնողները չեն կատարում): Վարժության ավարտից հետո էստաֆետը արագ հանձնում է երեխային: Երեխան՝ առանց օղակի, ուղիղ վազքով արագ մոտենում է դիմացի կանգնակին, վերցնում է մեկ օղակ, վազքով մոտենում է եզրագծին տեղադրված կանգնակին, օղակը գցում կանգնակի վրա: Նույնը կատարում են թիմի բոլոր անդամները: Վարժությունը եզրափակում է մայրը (կամ հայրը): Հաղթող է ճանաչվում այն ընտանիքը, որը բոլորից արագ է ավարտում վարժությունը (վայրկյան):





## 2) Վարժություն բասկետբոլի գնդակով

Առաջին մասնակիցը՝ անվասայլակով հայրը կամ մայրը, մրցավարի հրահանգի համաձայն բասկետբոլի գնդակով մոտենում է բասկետբոլի օղակին (*մեկնարկից օղակ՝ 8 մետր, օղակից նշակետի՝ 3 մետր*), անցնելով նշագիծը՝ կատարում է նետում ազատ ոճով, արդյունավետ նետումից հետո գնդակով վերադառնում է մեկնարկ և հանձնում հաջորդ մասնակցին: Եթե անվասայլակով հայրը (*կամ մայրը*) վարժությունը արդյունավետ չի կատարում, ապա փորձում է երկրորդ անգամ, հետո միայն վերադառնում: Երկրորդ մասնակիցը, բասկետբոլի գնդակը վարելով, մոտենում է բասկետբոլի օղակին, անցնելով նշագիծը՝ կատարում է նետում ազատ ոճով, արդյունավետ նետումից հետո գնդակը վարելով վերադառնում է մեկնարկ և հանձնում հաջորդ մասնակցին: Եթե վարժությունը արդյունավետ չի կատարում, ապա վերցնում է գնդակը, վարելով հասնում մեկնարկ, շրջանցում է տեղադրված արգելքը և վերադառնում՝ նոր նետում կատարելու համար: Երկրորդ նետումից հետո (*անկախ արդյունքից*) վերադառնում է մեկնարկ և գնդակը հանձնում ընտանիքի մյուս անդամին: Նույնը կատարում են ընտանիքի մյուս անդամները: Հաղթող է ճանաչվում այն ընտանիքը, որը բոլորից արագ է ավարտում վարժությունը (*վայրկյան*):




## 3) Խաղային փոխանցվազք՝ թենիսի գնդակներով

Առաջին համարի մասնակիցը՝ մայրը (*կամ հայրը*), մեկնարկային գծից մոտենում է գետնին մեկ ուղղությամբ դրված 3 օղակներին (*օղակի տրամագիծը՝ 25-30 սմ*): 1-ին օղակի մեջ դրված են թենիսի 5 գնդակներ (*մեկնարկից 1-ին օղակ՝ 10 մետր, օղակների հեռավորությունը մեկը մյուսից՝ 2 մետր*): Օղակներին մոտեցած մայրը (*կամ հայրը*) վերցնում է օղակի մեջ դրված 1-ին գնդակը, տեղադրում 2-րդ օղակի մեջ, վերադառնում 1-ին օղակի մոտ, վերցնում 2-րդ գնդակը, դարձյալ տեղադրում 2-րդ օղակի մեջ, և այդպես մինչև վերջին գնդակի տեղադրումը: Ավարտից հետո շարունակում է վազքը, մոտենում վերջին օղակից 15 մետր հեռավորությամբ դրված զամբյուղին (*տրամագիծը՝ 30-35 սմ*),

շրջանցում է այն և վազքով մոտենում մեկնարկային գծին, էստաֆետը հանձնում հաջորդ մասնակցին՝ երեխային:

Երեխան, վերցնելով 2-րդ օղակի թենիսի 5 գնդակները, հերթականությամբ, ինչպես 1-ին մասնակիցը, տեղադրում է դրանք 3-րդ՝ 40-50 սմ բարձրություն ունեցող կանգնակի վրա դրված օղակի մեջ, վազքով մոտենում է զամբյուղին, շրջանցում այն և վերադառնում մեկնարկային գիծ՝ էստաֆետը հանձնելով անվասայլակով *հորը (կամ մորը)*, որը, արագ մոտենալով կանգնակին, հավաքում է թենիսի 5 գնդակները, տեղադրում կանգնակի վրա դրված փոքրիկ պարկի մեջ, մոտենում նշագծին, կատարում 5 նետում զամբյուղի մեջ (*ներումը կատարվում է ազատ ոճով*) և վերադառնում:


Յուրաքանչյուր անարդյունավետ նետման համար ընտանիքը ստանում է 1 տուգանային միավոր (*յուրաքանչյուր 1 տուգանային միավորի դիմաց մասնակցի ժամանակին գումարվում է 1 վայրկյան, հեռավորությունը զամբյուղից նշագիծ՝ 2 մետր*): Հաղթող է ճանաչվում այն ընտանիքը, որը բոլորից արագ է կատարել վարժությունը (*վայրկյան*):



#### 4) Խաղային փոխանցավազք՝ 80 մ (20 մ + 20 մ + 40 մ)

Առաջին մասնակիցը՝ անվասայլակով հայրը (*կամ մայրը*), մրցավարի հրահանգի համաձայն արագ անցնում է 20 մետր և ձեռքի հպումով նշագծի մոտ էստաֆետը փոխանցում երկրորդ մասնակցին՝ հորը (*կամ մորը*), որը վազքով մոտենում է գետնին մեկ ուղղությամբ դրված մարմնամարզական 5 օղակներին (*հեռավորությունը մեկը մյուսից՝ 3 մետր, մեկնարկից առաջին օղակ՝ 3 մետր, վերջին օղակից վերջնագիծ՝ 5 մետր*), օղակները հաջորդաբար անցկացնելով գլխի վրայով՝ դնում է գետնին, վազքով մոտենում վերջնագիծ և ձեռքի հպումով էստաֆետը փոխանցում է երրորդ մասնակցին՝ երեխային: Վերջինս վազքով ուղրապտույտ անցնում է 4 գուրզերի միջով (*մեկնարկից մինչև գուրզ՝ 4 մետր, գուրզերի հեռավորությունը՝ 2 մետր, ներքնակից վերջին գուրզ՝ 2 մետր*), մոտենում է ներքնակին, կատարում գլուխկոնծի, այնուհետև անցնում է 8 մետր հեռավորության վրա դրված մեծ պարկի միջով (*երկարությունը՝ 3 մետր, տրամագիծը՝ 70 սմ*), վերցնում է 3 մետր հեռավորության վրա դրված փոքրիկ պարկը (*չափսը՝ 25 սմ տրամագիծ, երկարությունը՝ 50 սմ*), արագորեն պարկի մեջ է լցնում վազքուղու վրա շարված թենիսի 6 գնդակները (*գնդակների հեռավորությունը մեկը մյուսից՝ 1 մետր*) և պարկը ձեռքին

վազքով հատում վերջնագիծը: Հաղթող է ճանաչվում այն ընտանիքը, որը բոլորից արագ է ավարտում վարժությունը (վայրկյան):




### 5) Օղակներով նետումներ նշանակելին

Յուրաքանչյուր ընտանիքի մասնակից կատարում է հինգ նետում՝ 3 մետր հեռավորությունից:

Առաջին մասնակիցը օղակը (տրամագիծը՝ 25-30 սմ) նետում է կանգնակին, որն ունի 40-50 սմ բարձրություն: Նույնը կատարում են հաջորդ մասնակիցները: Հաղթող է ճանաչվում այն ընտանիքը, որը կատարել է առավել արդունավետ նետումներ:

Զի թույլատրվում օղակը նետելիս անցնել նշագիծը:




### 6) Հավաքիր «ՀԱՂԹԱՆԱԿ» բառը

Առաջին մասնակիցը՝ ընտանիքի երեխան, մեկնարկային գծի մոտից մրցավարի հրահանգով վերցնում է արկղի մեջ դրված տառերից մեկը (տառերը գրված են Ա4 չափսի թղթի վրա), վազքով զիզազաձև շրջանցում է մինյանցից աջ և ձախ դրված 5 կանգնակները (մեկնարկից մինչև 1-ին կանգնակ՝ 3 մետր, կանգնակների միջև հեռավորությունը՝ 2,0 մետր), ոլորապտույտ անցնում է կողք կողքի դրված երկու ասլետիկական արգելքների միջով (արգելքների բարձրությունը՝ 0,90 մետր, լայնությունը՝ 1,25 մետր, վերջին կանգնակից արգելք՝ 3 մետր), վազքով մոտենում է վահանակին (երկրորդ արգելքից մինչև վահանակ՝ 5 մետր, վահանակի չափսն է՝ 2,0 մետր x 40 սմ, 1,2 մետր բարձրությամբ), տառը կախում է վահանակից և արագ վերադառնում մեկնարկային գիծ՝ ձեռքի հպումով էստաֆետը փոխանցելով հաջորդ մասնակցին, և այդպես մինչև «ՀԱՂԹԱՆԱԿ» բառի հավաքումը (անվասայլակով մասնակիցը՝ հայրը կամ մայրը, վարժությունը կատարելիս անցնում են օղակների կողքով):

Հաղթող է ճանաչվում այն ընտանիքը, որը բոլորից արագ է ավարտում վարժությունը (վայրկյան):

Վահանակի վրա տառերի տեղադրումը պարտադիր է. հակառակ դեպքում ընտանիքին կգրանցվի տուգանային՝ 1 վայրկյան:





Ձև № 1

### Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

«ԼԱՎԱԳՈՒՅՆ ՄԱՐԶԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔ» ՄՐՅՈՒՅԹԻ 1-ԻՆ ՓՈՒԼԻ

Տարիքային խումբը -----

Անցկացման վայրը՝ քաղաք Երևան ----- 2020 թ.

№	Թիմի անդամների անունը, հայրանունը, ազգանունը	Ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը	Անձնագրի սերիան, համարը, ում կողմից և երբ է տրված	Մրցում-ներում վաստակած միավորը	Գրաված տեղը	Տարածաշրջանը, բնակավայրը և հաշվառման հասցեն
1. 2. 3.						
1. 2. 3.						
1. 2. 3.						
1. 2. 3.						
և այլն						

Երևանի քաղաքապետ՝

-----  
(անուն-ազգանունը)

-----  
-  
(ստորագրությունը)  
Կ. Տ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ԼԱՎԱԳՈՒՅՆ ՄԱՐԶԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔ» ՄՐՑՈՒՅԹԻ 1-ԻՆ ՓՈՒԼԻ

Մարզի անվանումը -----

Տարիքային խումբը -----

Անցկացման վայրը -----

----- 2020

թ.

N°	Թիմի անդամների անունը, հայրանունը, ազգանունը	Ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը	Անձնագրի սերիան, համարը, ում կողմից և երբ է տրված	Մրցում-ներում վաստակած միավորը	Գրաված տեղը	Տարածաշրջանը, բնակավայրը և հաշվառման հասցեն
1. 2. 3.						
1. 2. 3.						
1. 2. 3.						
1. 2. 3.						
և այլն						

ՀՀ մարզպետ՝

-

-----

(անուն-ազգանունը)

-----

-

(ստորագրությունը)

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ԼԱՎԱԳՈՒՅՆ ՄԱՐԶԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔ» ՄՐՑՈՒՅԹԻ 1-ԻՆ ՓՈՒԼԻ

(Արցախի Հանրապետությունում)

Անցկացման վայրը -----

----- 2020 թ.

№	Թիմի անդամների անունը, հայրանունը, ազգանունը	Ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը	Անձնագրի սերիան, համարը, ում կողմից և երբ է տրված	Մրցումներում վաստակած միավորը	Գրաված տեղը	Տարածաշրջանը, բնակավայրը և հաշվառման հասցեն
1. 2. 3.						
1. 2. 3.						
1. 2. 3.						
1. 2. 3.						
և այլն						

Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարար՝

-----  
(անուն-ազգանունը)

-----  
(ստորագրությունը)